ի մէջիթ· մեռելոցն՝ քահանայից տան նախ
կատարել, եւ ապա զայ իմամն՝ թաղել տանի, 15
եւ զայն առնեն վասն երկիւղի· ապա առաւել
սիրեն զհաւատն Լուսաւորչի քան զՄահմէտի։

Կայր ընդ մեզ երկու ճիաւոր թարճիման
եւ չորս չաւուշ, որք են խուլաւուղք· զի
յառաջ երթան եւ յետոյ։ Այլ եւ այն Ապտալն 20
ընդ մեզ էր· եւ երկու այլ վանաց մշակ, որ
մինչ ի Հալապ բոկ ոտամբ եւ հեծիոտս
զնային, քարուտ, փշոտ եւ մացառուտ ճա-
նապարհս։

ՀԱՆԳՐՈՒԱՆՔ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Եւ հասաք ի ԹՈՒՐԱՊԷԿՆ· տվաք մէկ 25
մէկ ոսկի։ Եւ անտի եկաք ի խան մի ԼՈՒ-
ՊԻՆ· տվաք երկու երկու բարա· զոր եւ անդ
եւս անձրեւոյ ջուր արբաք· եւ անդ առին զա-
ֆար երկու ու կէս զուռուշ մարդագլուխ։ Զի
կէս աւուր ճանապարհ է Լուպէնու ԼԱԳԻՍԱՅ, 30
որ է Նապլուս քաղաք· եւ էր քաղաքս այս
քրիստոնէից չէնք· եւ մէջն ամէն եկեղեցիք,
եւ թվի թէ Ֆռանկաց, զէրա քլաչթօրնի էր·
եւ ասին թէ ասա գլխատեցին զՅովհաննէս
Մկրտիչն։ 35

Եւ անտի բաղում լերամբ եւ մայրիւք
եկաք ի սուրբ լեառն ԹԱՓՕՐ· եւ հանդէպ
նմին Հերմոն, վայելուչ եւ դեղեցիկ, տափա-
րակ եւ ծաղկազարդ· որ ի ծաղկանց հոտոյն
հեշտանային մարդիկ· եւ ստորոտ լերանն կայր 40

15 թաղէլ։ — 38, 77 տարարակ։